դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի
N Մ-758-Ա և 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա որոշումների խմբագրությամբ) ծրա-
գրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱՐԱՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 ապրիլի 2016 թվականի N Մ-256-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2016 թվականի մարտի 22-ի N 07/80-2/10355-16 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 25-ի N 03/3-3/10288-16 եզրակա-
ցությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմ-
նադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսություն-
ների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում»
ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի
N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա,
հուլիսի 24-ի N Մ-758-Ա և 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա որոշումների խմբա-
գրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մայ գարդեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03539587) 2016 թվականի մարտի 14-ին կնքված
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ոռոգման համակարգի մոնտաժ-
ման աշխատանքների իրականացում՝ 20 մլն դրամի չափով, առանց ավելացված արժեքի
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 ապրիլի 2016 թվականի N Մ-257-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐ-
ՎԱՐԻ 19-Ի N Մ-093-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2016 թվականի ապրիլի 1-ի N 07/80-2/1114-16 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 1-ի N 06/3-3/10661-16
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնա-
ճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված
գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի
19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրա-
կանացվող «Երևանի Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի
մասին» N Մ-093-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար
ունի զգալի նշանակություն՝

«Էն Սի Ի Սի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07404158) 2016 թվականի փետրվարի 17-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է եկեղեցու վերանորոգման
աշխատանքների իրականացում՝ 36,208,102 դրամի չափով, առանց ավելացված արժեքի
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 ապրիլի 2016 թվականի N Մ-258-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐ-
ՎԱՐԻ 19-Ի N Մ-093-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2**


(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի ապրիլի 1-ի N 07/80-2/11108-16 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 1-ի N 06/3-3/10660-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող «Երևանի Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի մասին» N Մ-093-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ակվատուս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01826626) 2016 թվականի մարտի 22-ին կնքված՝ N 220316 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում 1,015 կգ շինարարական կրի ձեռքբերում՝ 628,425 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 ապրիլի 2016 թվականի N Մ-259-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄ-
ԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 21-ի N 07/80-2/10307-16 և N 06/3-3/10276-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Այ Թի մաստեր էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00131984) 2016 թվականի մարտի 14-ին կնքված՝ N 11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղյա խողովակների ձեռքբերում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ֆայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01516105) 2016 թվականի մարտի 15-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների, հարակից սարքերի, պիտույքների, պարագաների և ծրագրերի մատակարարում՝ 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 ապրիլի 2016 թվականի N Մ-260-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐ-
ԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2016 թվականի մարտի -ի N 07/80-2/16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի -ի N 06/3-3/16 եզրակացությունները, **ո ր ո շ**
ու մ է.


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց
բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմ-
բերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա, 2014 թվականի փե-
տրվարի 14-ի N Մ-059-Ա, 2015 թվականի հունվարի 26-ի N Մ-006-Ա և հոկտեմբերի 7-ի
N Մ-1109-Ա ու 2016 թվականի փետրվարի 22-ի N Մ-138-Ա որոշումների խմբագրությամբ)
ծրագրի 10-րդ և 11-րդ կետերում «1,000,000 դրամ» բառերը փոխարինել «1,700,000 դրամ»
բառերով:

2. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«Գարանտ աուդիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02252572) 2016 թվականի մարտի 7-ին
կնքված՝ N 02/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի

2015 թվականի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ
ուսումնասիրության աշխատանքների իրականացում՝ 500,000 դրամի չափով, առանց
ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 ապրիլի 2016 թվականի N Մ-261-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ», ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի ապրիլի 1-ի N 07/80-2/11337-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի ապրիլի 2-ի N 02/3774-16, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2016 թվականի ապրիլի 2-ի N 1/06/410-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 5-ի N 06/3-4/11106-16 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 500 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված խաղադաշտի լուսատախտակի սարքավորման մասերը (մեկ տեղ, 2 կգ ընդհանուր քաշով, 1,475 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 275 եվրո փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա»
իրավաբանական անձանց միության նախագահ
Բուրեն Հայրապետյանի կողմից

« 31 » մարտի 2016 թ.

«Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը նպաստելու և միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի, Հրազդան մարզադաշտի, Երևանի, Գյումրու և Վանաձորի ֆուտբոլի ակադեմիաների ենթակառուցվածքի արդիականացում և բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Նիդն) և ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Զյուրիխ):
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվում է՝ - Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտում (քաղ. Երևան, Վարդանանց 65). - Հրազդան մարզադաշտում (քաղ. Երևան, Հրազդանի կիժ 4/1). - Երևանի ֆուտբոլի ակադեմիայում (քաղ. Երևան, Աճառյան 35/31). - Վանաձորի ֆուտբոլի ակադեմիայում (քաղ. Վանաձոր, Տարոն 4 թաղամաս, Սեբաստիա փողոցի 2/4). - Գյումրու ֆուտբոլի ակադեմիայում (քաղ. Գյումրի, «Մուշ-2» թաղամաս 10/5) հասցեներում՝ սպորտի բնագավառում:
6.	Ծրագրի բյուջեն	500,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915)

4.4/2

2

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016 թվականի մարտի 31-ից մինչև 2016 թվականի դեկտեմբեր 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շինարարական նյութերի, տեխնիկայի, լողավազանի ախտահանման միջոցների, հիգիենայի և անկողնային պարագաների, խոտի սերմի, պարարտանյութերի, ներքին հարդարման պարագաների և կահավորանքի, մարզագույքի, մարզասարքերի, սարքավորումների ներմուծում՝ շուրջ 500,000,000 դրամ սկիզբը 2016 թվականի մարտի 31-ից մինչև դեկտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ներմուծել՝ - շինարարական նյութեր՝ 40,000,000 դրամ, - խաղաղաշտերի մշակման ու խնամքի տեխնիկա և պահեստամասեր՝ 55,000,000 դրամ, - լողավազանի ախտահանման և խնամքի միջոցներ՝ 15,000,000 դրամ, - հիգիենայի և անկողնային պարագաներ՝ 15,000,000 դրամ, - խոտի սերմ և պարարտանյութեր՝ 130,000,000 դրամ, - ներքին հարդարման պարագաներ և կահավորանք՝ 30,000,000 դրամ, - մարզագույք՝ 35,000,000 դրամ, - մարզասարքեր՝ 20,000,000 դրամ, - սարքավորումներ՝ 160,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն կիրականացվի ՌԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից՝ սահմանված կարգով:

Կազմեց՝ Ֆինանսական նախարարության Պապիկյան



Handwritten signature.



4.4/2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 ապրիլի 2016 թվականի N Մ-262-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖՈՒՏԲՈԼԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի ապրիլի 6-ի N 07/80-2/11538-16, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 6-ի N 06/3-4/11264-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի ապրիլի 4-ի N 02/14/3842-16 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2016 թվականի ապրիլի 4-ի N 1/06/418-16 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 205,733,130 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն ֆուտբոլի զարգացմանը» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Չեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2016 թվականի ապրիլի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արհեստական խոտածածկով խաղադաշտի կառուցման աշխատանքների իրականացում՝ 59,850,150 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


2) «Astro Turf» ընկերության հետ (Randweg 14, 8061 RW Hasselt, The Netherlands) 2016 թվականի մարտի 2-ին կնքված պայմանագրի NBR 63850201AT GV-Rev 003 և NBR 63860201AT GVIS-Rev 003 հավելվածներում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղադաշտերի արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 27,450 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«01» ապրիլի 2016թ.



«Աջակցություն ֆուտբոլի զարգացմանը»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացման նպատակով «Փյունիկ» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության համար, արհեստական խոտածածկով խաղադաշտի, մարզումային դաշտի կառուցում, ինչպես նաև «Բանանց» ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպության համար խաղադաշտի արհեստական խոտածածկի ներմուծում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3. Բարեգործը	Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - ՈՒԵՖԱ (Զվյցաբիա, 1260 Նիոն):
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915):
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքի, Ծիծեռնակաբերդի 4/7 և Ջիվանի 2 հասցեներում սպորտի բնագավառում:
6. Ծրագրի բյուջեն	205,733,130 դրամ
7. Բարեգործություն ստացողը	«Փյունիկ» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպություն (ՀՀ, քաղ. Երևան, Մայաթ-Նովար փողոց թիվ 29/1, ՀՎՀՀ՝ 02562579) և «Բանանց» ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպություն (ՀՀ, քաղ. Երևան, Ջիվանի 2, ՀՎՀՀ՝ 02565965)

2

8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի օգոստոսի 31-ը:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. «Փյունիկ» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության խաղադաշտի և մարզումային դաշտի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում 59,850,150 դրամ սկիզբը 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի օգոստոսի 31-ը: 2. Արհեստական խոտածածկերի, ռետինե գնդիկների, մարզագույքի, արհեստական խոտածածկի մշակման տեխնիկայի, կվարցային ավազի ներմուծում՝ 130,648,230 դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև օգոստոսի 31-ը: 3. Արհեստական խոտածածկերի տեղադրման աշխատանքներ 15,234,750 դրամ՝ սկիզբը 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի օգոստոսի 31-ը:
10. Ձևեր բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	- Խաղադաշտի և մարզումային դաշտի հիմքի նախապատրաստման շինարարական աշխատանքների իրականացում՝ 59,850,150 դրամ: - Փյունիկ ֆուտբոլային ակումբի խաղադաշտերի արհեստական խոտածածկերի (տեղադրման նյութերով և պարագաներով)՝ 115 017.6 եվրոյին համարժեք դրամ, մարզագույքի՝ 5540 եվրոյին համարժեք դրամ, արհեստական խոտածածկի մշակման տեխնիկայի՝ 10250 եվրոյին համարժեք դրամ, Բանանց ֆուտբոլային ակումբի խաղադաշտի արհեստական խոտածածկի՝ 17250 եվրոյին համարժեք դրամ, փոխադրման ծախսերը կկազմեն 11400 եվրոյին համարժեք դրամ, ներմուծում: - արհեստական խոտածածկի ռետինե գնդիկների՝ 26432 եվրոյին համարժեք դրամ, փոխադրման ծախսերը կկազմեն 43200 եվրոյին համարժեք դրամ, ներմուծում: - կվարցային ավազի՝ 7150 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, ներառյալ փոխադրման ծախսերը, ներմուծում: - Խաղադաշտի և մարզումային դաշտի խոտածածկերի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 27450 եվրոյին համարժեք դրամ:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպության ծախսերը	Կազմակերպության ծախսեր չեն նախատեսվում:
12. Համագործակցությունը պետական կառավարման տնտեսական կառույցների, մարմինների, այլ կազմակերպությունների հետ:	Ծրագիրը իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ:
13. Ծրագրի արդյունավետությունը նկատմամբ վերահսկողության միջոցների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՈՒԵՖԱ-ի (Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիա) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից:



5/4/16



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 ապրիլի 2016 թվականի N Մ-263-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԴԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի ապրիլի 1-ի N 07/80-2/1142-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ապրիլի 4-ի N 06/3-4/11001-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի ապրիլի 5-ի N ԱՄ/22.2/3518-16 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (5 տեղ, 495 կգ ընդհանուր քաշով, 684,603.16 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,375 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծման և անհատույց բաշխման (համաձայն կից կարգո մանիֆեստի) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Կ Ա Ր Գ Ո Մ Ա Ն Ի Ֆ Ե Ս Ս
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ**

ՀԱՇՎ 021-րդ ՉԿԵՐԾ

29.03.2016

Հ/Հ	Դոնոր	Նկարագրություն	Ստացող	Կոդ	Քանակ / Սկիզբ	Քաշ (lbs)	Այժմ (ԱՄՆ դոլար)
1	ԱՄՆ-ի Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղեր	Մոլդարյան Ա. - ՀՀ առողջապահության նախարարություն	AIR 021-01	219	756	489 769,29
2	ԱՄՆ-ի Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղեր	Ավետիսյան Կ. - ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն	NKR AIR 021-02	42	218	140 094,06
3	ԱՄՆ-ի Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղեր	Ղազարյան Ս. - ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն	AIR 021-03	5	97	52 414,81
4	ԱՄՆ-ի Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղեր	Մինայան Արա. - ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն	AIR 021-04	1	5	1 125,00
5	ԱՄՆ-ի Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղեր	Արարատյան Ռ. - ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն	AIR 021-05	2	15	1 200, 00

Ընդամենը


269 1091 684 603,16

Փոխադրման ծախսեր

2 375,00

Ընդամենը

686 978,16





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 ապրիլի 2016 թվականի N Մ-264-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄ-
ԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի ապրիլի 6-ի N 07/80-2/11517-16 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 5-ի N 06/3-4/11136-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված երկու «Toyota Hilux» մակնիշի կիսաբեռնատար ավտոմեքենաները (2015 թվականի արտադրության, նույնականացման համարները՝ MR0FR22G700738960 և MR0FR22G700739647, յուրաքանչյուրը 19,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, յուրաքանչյուրի փոխադրման ծախսերը կազմել են 800 ԱՄՆ-ի դոլար) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի մարտի 18-ի N Մ-207-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 ապրիլի 2016 թվականի N Մ-265-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N Մ-800-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2016 թվականի ապրիլի 6-ի N 07/80-2/11465-16 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ապրիլի 6-ի N 06/3-4/11142-16 եզրակացություն-
ները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի
կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման,
վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-800-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեդի պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04109451) 2016 թվականի մարտի 10-ին կնքված
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փայտեպլաստե արտադրանքի
ծեռքերում՝ 565,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱՐԱՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 ապրիլի 2016 թվականի N Մ-266-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N Մ-800-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2016 թվականի ապրիլի 6-ի N 07/80-2/11522-16 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ապրիլի 6-ի N 06/3-4/11143-16 եզրակացություն-
ները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի
կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման,
վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-800-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլլիպս ԶիԷյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2016 թվականի մարտի 15-ին կնքված՝
N 1TM/SKH պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անվտանգության
ահազանգման համակարգի սարքավորումների մատակարարման, տեղադրման և կարգա-
բերման աշխատանքների իրականացում՝ 271,943 դրամի չափով, առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
08 ապրիլի 2016 թվականի N Մ-267-Ա

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿՈՐՄԻՏԵ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՈՒՅՍ» ՀԱՅԻ ԱԶՔԵՐԻՆ» (ուլթերորդ փուլ)
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 21-ի N 07/80-2/10218-16 և մարտի 22-ի N 06/3-3/10325-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի մարտի 11-ի N 02/14/2592-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի մարտի 10-ի N ԱՄ/22.2/2412-16, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի մարտի 12-ի N ՖՔ/ԱնՄ-2-1/798-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:***

1. Բարեգործական որակելի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Վրացական 9, ք. 44, ՀՎՀՀ՝ 00074765) 2016 թվականի ապրիլից մինչև 2019 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ 875,000,000 դրամ ընդհանուր արժեքով «Լույս» հայի աչքերին» (ուլթերորդ փուլ) ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական ակնաբուժության նախագիծ» (ՀԱՆ) բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Լիկվիդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01201697) 2016 թվականի փետրվարի 22-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ակնաբուժական/բժշկական սարքավորումների և դեղորայքի ձեռքբերում՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05507136) 2016 թվականի մարտի 3-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի մարտի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ակնաբուժական/բժշկական պարագաների և դեղորայքի ձեռքբերում՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Յուլթո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված՝ N 027/30/08/2012 պայմանագրի 2014 թվականի փետրվարի 28-ի հետևածայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ» ցանցի մալուխային կապի ապահովում և տեխնիկական սպասարկում՝ 750,000 դրամի չափով,

առանց ավելացված արժեքի հարկի ու ՀԱՆ-ի ակնաբուժական կրթական կենտրոնի գրադարանի «Ինտերնետ» ցանցի ծառայությունների մատուցում՝ 750,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Օրանժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) կնքված՝ N 2316125 և 2699016 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 180,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի և բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

5) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2013 թվականի օգոստոսի 22-ին կնքված՝ N 077200986 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 720,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

6) «Անտարես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02519531) 2016 թվականի մարտի 3-ին կնքված՝ N 345 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում տեղեկատվական և հանրակրթական նյութերի (թրոշուր, պաստառ, ծեփարկներ) տպագրում՝ 8,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

7) «Փաբլիսիա Հեպտա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00100064) 2016 թվականի փետրվարի 22-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գովազդային և մարքեթինգային ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


8) «Մաստերկոմպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01566751) 2009 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N MCS04/2009 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային տեխնիկայի վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

9) «ԱրմենՏել» ՀՀ ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2005 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ N 010510380 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

10) «Երևան Զուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2016 թվականի հունվարի 12-ին կնքված՝ N 07-0098-7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հիմնադրամի գրասենյակի ջրամատակարարում՝ 100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

11) «Հայրուսագազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի («Գազպրոմ» Արմենիա) հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 015.08.13.1836 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հիմնադրամի գրասենյակի գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

12) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Կենտրոն» տարածքային համակարգման տնօրինության հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2016 թվականի մարտի 2-ին կնքված՝ N 230728 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի



մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

13) «Բիզնես Քոնսայթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01538458) 2016 թվականի փետրվարի 22-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀԱՆ-ի գրասենյակի հաշվապահական ծառայությունների մատուցում՝ 8,460,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

14) «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2016 թվականի փետրվարի 2-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀԱՆ-ի 2016-2017 թվականների տարեկան գործունեության աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,740,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

15) «Ըվրի Դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2008 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված՝ N J137-08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հիմնադրամի գրասենյակի ջրամատակարարում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

16) «Ֆելե» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2016 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ N 039/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում բեզինի և դիզելային վառելիքի գնում՝ 7,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության շախատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետի և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Մարտի, Ծիրակի, Սյունիքի, Վայոց ձորի ու Տավուշի մարզպետ-ների:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎՈՒՄ

«Հայկական Ակնաբուժության նախագիծ» Բարեգործական հիմնադրամ» կազմակերպության

Հայաստանյան գրասենյակի տնօրեն

Ն. Եղիազարյանի կողմից

«ԼՈՒՅՍ ՀԱՅԻ ԱՇԽԵՐԻՆ» ծրագիր / VIII ՓՈՒԼ
Ծ Ր Ա Չ Ի Ր (լրամշակված)



1. Ծրագրի նպատակը	Սվազեցնել ձեռք բերվող կուրսությունը բնակչության շրջանում, հասանելի և մաշելի դարձնել ակնաբուժական օգնությունը և բուժօգնությունը, աջակցել սոցիալապես անապահով և խոցելի բնակչությանը: Մասնավորապես 1. ՀՀ Առողջապահության նախարարության առաջարկով հիմնել, սարքավորումներով ապահովել մարզային կենտրոններ Լոռու, Մյունիքի և Վայոց ձորի մարզերում (թշվառական կենտրոնների տարածքում) և ապահովել ՀԱՆ-ի կողմից հիմնված ակնաբուժական կենտրոնի արդյունավետ աշխատանքը 2. Համալսարանի կուրսության կանխարգելման գերազանցության կենտրոնի աշխատանքները: 3. Ապահովել ակնային հիվանդությունների կանխարգելում/ հետազոտություն, բուժում /վիրահատություն Աչքի շարժական հիվանդանոցի, նորաստեղծ մարզային ակնաբուժական կենտրոնների միջոցով, անհատական ռեոլոգիայի միջոցով, նորածնային սրբիկների և բուժման ազգային ծրագրի շրջանակներում ապահովել անհրաժեշտ սարքավորումները: 4. Բարելավել ծառայությունների մատակարարության բնագավառում մասնագիտական վերապատրաստման/դասընթացների միջոցով՝ պատրաստել մասնագետներ նորաստեղծ մարզային ակնաբուժական կենտրոնների համար, իրականացնել հեռակա/առցանց դասընթացներ Երևանի մասնագիտացված ակնաբուժական հաստատությունների երիտասարդ մասնագետների համար: Հայաստանի ներստալ թշվառական ատոմային կենտրոնի հոգսման ենթածրագրի շրջանակներում ստեղծել առցանց դասընթացներ և բուժում ներստալ թշվառների և բուժարգելիչ միջոցառումների օժանդակել բնակչության շրջանում ակնային հիվանդությունների, բուժման և կանխարգելիչ միջոցառումների անհրաժեշտության մասին տեղեկատվության տարածմանը և իրազեկության բարձրացմանը, հատկապես դպրոցականների շրջանում: Խառնուրդ էներ ստանալ ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններ: Նախարարի ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրն է ԱՄՆ-ում գտնվող «Հայկական ակնաբուժության նախագիծ» Բարեգործական ֆունդացիան (The Armenian Eye Care Project Corporation), որը հանդիսանում է Հայկական ակնաբուժության նախագիծ ԲՀ-ի հիմնադիրը: 2016 թ. բուժօգնության ծրագիրը համաֆինանսավորվում է նաև «ՅՈՒՆԵՍԿՕ» Մոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական հիմնադրամից և Գեղարքունիքի Հայկաթուղի ԲՀ-ի (Եվեյգարիա) կողմից, 2016-2017 թթ. Հայաստանի ներստալ թշվառական ատոմային կենտրոնի կողմից: Իրականացումը ֆինանսավորվում է ԱՄՆ ՍԶԳ-ի կողմից:
2.	Ստորագրող



4/2

4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Ակնաբուժության Նախագիծ՝ բարեգործական հիմնադրամը, ՀՎՀՀ՝ 00074765, իրավաբանական հասցե՝ Վրացական 9, բն. 44, իրական հասցե՝ Այգեատան, 5-րդ փ., 7-րդ տուն հեռ.՝ 55 90 68; 577611:					
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն առնչվում է առողջապահական և սոցիալական ոլորտներին և ընդգրկում է Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունիքի, Կոտայքի, Տավուշի, Վայոց Ձորի, Շիրակի, Լոռու մարզերը, Երևան քաղաքի սոցիալական հաստատությունները, Երևանի և մարզերի ծննդատների ինտենսիվ թերապիայի բաժանմունքները: Կշարունակվեն աշխատանքները Տավուշի մարզային ակնաբուժական կենտրոնում, կավարտվի/կհամարվի Լոռու մարզային կենտրոնի կահավորումը և կստեղծվեն Սյունիքի և Վայոց Ձորի կենտրոնները: Դրանք կգործեն բժշկական կենտրոնների տարածքում՝ որպես ակնաբուժական բաժանմունք:					
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր կողմնորոշիչ արժեքը՝ 875,000,000 ՀՀ դրամ					
		Եռամսյակ	ա/մարզային ակնաբուժական կենտրոնների ստեղծում	բ/հետազոտություն/ բուժում/վիրահատություն	գ/մասնագիտական վերապատրաստում	դ/հանրային իրազեկություն/ տեղեկատվություն	Վարչական ծախսեր ԸՆԴԱՄԵՆԸ
		2016					
		ապրիլ-հունիս	96,435,000	13,320,000	740,000	1,600,000	2,908,000 115,003,000
		հուլիս-սեպտեմբեր	64,290,000	16,650,000	925,000	2,000,000	3,635,000 87,500,000
		հոկտեմբեր-դեկտեմբեր	32,145,000	11,655,000	647,500	1,400,000	2,544,500 48,392,000
		ընդամենը 2016	192,870	41,625,000	2,312,500	5,000,000	9,087,500 250,895,000
		ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում	185,250,000	40,500,000	1,887,500	3,250,000	5,587,500 236,475,000
		ծախսեր՝ որոնց համար չի հայցվում ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում	7,620,000	1,125,000	425,000	1,750,000	3,500,000 14,420,000
		2017					
		հունվար-մարտ	32,145,000	9,990,000	555,000	1,200,000	2,181,000 46,071,000
		ապրիլ-հունիս	64,290,000	18,315,000	1,017,500	2,200,000	3,498,500 89,571,000
		հուլիս-սեպտեմբեր	64,290,000	16,650,000	925,000	2,000,000	3,635,000 87,500,000

		64,290,000	13,320,000	740,000	1,600,000	2,908,000	82,858,000
		225,015	58,275,000	3,237,500	7,000,000	12,722,500	306,250,000
		ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում	216,125,000	56,700,000	2,642,500	4,550,000	7,822,500 287,840,000
		ծախսեր՝ որոնց համար չի հայցվում ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում	8,890,000	1575,000	595,000	2,450,000	4,900,000 18,410,000
		2018					
		հունվար-մարտ	32,145,000	13,320,000	740,000	1,600,000	2,908,000 50,713,000
		ապրիլ-հունիս	64,290,000	16,650,000	925,000	2,000,000	3,635,000 87,500,000
		հուլիս-սեպտեմբեր	64,290,000	14,985,000	832,500	1,800,000	3,271,500 85,179,000
		հոկտեմբեր-դեկտեմբեր	32,145,000	11,655,000	647,500	1,400,000	2,544,500 48,392,000
		ընդամենը 2018	192,870,000	56,610,000	3,145,000	6,800,000	12,359,000 271,784,000
		ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում	185,250,000	55,080,000	2,567,000	4,420,000	7,599,800 254,916,800
		ծախսեր՝ որոնց համար չի հայցվում ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում	7,620,000	1,530,000	578,000	2,380,000	4,760,000 16,868,000
		2019					
		հունվար-մարտ	32,145,000	9,990,000	555,000	1,200,000	2,181,000 46,071,000
		ընդամենը 2019	32,145,000	9,990,000	555,000	1,200,000	2,181,000 46,071,000
		ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և	30,875,000	9,720,000	453,000	780,000	1,844,000 42,169,000

		մաքսատուրքերից ազատում						
		ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում	1,270,000	270,000	102,000	420,000	840,000	2,902,000
		Ծրագրի ամբողջ գումարը	642,900	166,500,000	9,250,000	20,000,000	36,350,000	875,000,000
		ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում	617,500,000	162,000,000	7,550,000	13,000,000	22,350,000	822, 400,000
		ծախսեր՝ որոնց համար չի հայցվում ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում	25,400,000	4,500,000	1,700,000	7,000,000	14,000,000	52,600,000
7.	Բարեգործություն ստացողը	22 մարզերի և Երևանի բնակչությունը՝ աղքատ, անապահով ընտանիքները /ըստ ընտանեկան նպաստների համակարգի սահմանային մեծությունից սկսած (28 միավոր)/, երեխաները, թոշակառուները, հաշմանդամները, զոհված ազատամարտիկների ընտանիքները, անհաս նորածին երեխաները, որոնց սպառնում է անհասության ռետինոպաթիայի /ԱՌ/ պատճառով առաջացած կուրություն վտանգը: Ընդհանուր ակնային հետազոտությունների դեպքում – ստուգվում են բոլոր նրանք, ովքեր որոշում են զալ անվճար ստուգման: Վիրահատության ենթակա անձանց պետատվերից օգտվելու իրավասությունը ստուգվում է 22 աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած ընտանեկան անապահովության ցուցանիշների միջոցով՝ մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին: ՀԱՍ-ի շահառուներն են. ընդհանուր հետազոտությունների դեպքում՝ 30000 մարդ /ներառյալ 12000 երեխա/; բուժման/վիրահատության դեպքում՝ 2400 մարդ, ակնոցների տրամադրման դեպքում՝ 1500 մարդ, անհաս երեխաների հետազոտության և բուժման/ԱՌ/ դեպքում է՝ 1800 հոգի, ընդամենը 35700 մարդ: Ակնային հիվանդությունների, բուժման և կանխարգելիչ միջոցառումների տեղեկատվության և իրագրության շահառուների թիվը կես միլիոն մարդ է: Մասնագիտական կրթական ծրագրի շահառուներն են 100 բուժաշխատող: Մարզային կենտրոններում ստեղծման դեպքում՝ տվյալ մարզերի ողջ բնակչությունը:						
8.	Ծրագրի իրականացման տնօրոնությունը	Ծրագիրն իրականացվելու է 2016 թ. ապրիլ - 2019 թ. մարտ ժամանակաշրջանի ընթացքում:						
9.	Միջոցառումների նկարագրությունը	Ծրագրի նախատեսված բոլոր միջոցառումները անվճար են: Ծրագրի բաղադրիչներն են՝ (ա) մարզային ակնաբուժական կենտրոնների ստեղծում ըստ ԱՌ-ի առաջարկի՝ Լոռու, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում և						

	և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	աշխատանքների ապահովում Տավուշի մարզի ակնաբուժական կենտրոնում: Այս բաղադրիչի համար նախատեսվում է ընդամենը 642,900,000 ՀՀ դրամ (բ) կանխարգելում/հետազոտություն/բուժում/վիրահատություն/ակնոցների տրամադրում: Այս բաղադրիչի համար նախատեսվում է ընդամենը 166,500,000 ՀՀ դրամ, (գ) մասնագիտական վերապատրաստում/դասընթացներ, որոնց համար նախատեսվում է 9,250,000 ՀՀ դրամ, և (դ) հանրային իրագրություն/տեղեկատվություն, կրթություն, որի համար նախատեսվում է 20,000,000 ՀՀ դրամ: (ե) Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր, որոնց համար նախատեսվում է՝ 36,350,000 ՀՀ դրամ
		Ծրագրի բաղադրիչները իրականացվում են 22 տարածքում ըստ հետևյալ ժամանակացույցի՝ Արարատ (ապրիլ-մայիս, 2016 և, Արտ-մայիս 2018) Վայոց ձոր (մայիս -հունիս 2016), Սյունիք (օգոստոս- սեպտեմբեր, 2016), Արմավիր (սեպտեմբեր -նոյեմբեր, 2016) Երեզոստոս-հոկտեմբեր 2018), Կոտայք (մարտ-մայիս, 2017), Գեղարքունիք (մայիս -հունիս, 2017), Շիրակ (հուլիս- օգոստոս, 2017), Երզնկաձոր (սեպտեմբեր-նոյեմբեր 2017), Երևան (սոցիալական հաստատություններ և նորածինների ինտենսիվ թերապիայի կենտրոններ- 2016, 2017, 2018, 2019): Ակնային ընդհանուր զննումներ իրականացվելու են նաև 22 դպրոցներում: Աչքի արժանապատիվ հիվանդանոցը (ԱՀՀ) շրջելու է մարզերով և կատարելու տեսողության մանրազննիչ ստուգում և վիրահատություն՝ հիմնված ընդհանուր ակնային հետազոտությունների արդյունքների վրա: Անհասության ռետինոպաթիայի /ԱՌ/ ծրագրի աշխատանքները կատարվում են ընտրված ձևերով՝ շուրջ տարի, մարզային ակնաբուժական կենտրոնների աստեղծում – Լոռի 2016, Սյունիք -2017-2018, Վայոց ձոր 2018-2019 և աշխատանքների ապահովում Տավուշ -2016-2018, Լոռի 2016-2019, Սյունիք -2017-2019, Վայոց ձոր 2019:
